

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան, Արշակունյանց
պողոտա հ.127/21 հասցեում գործող ծխախոտի գործարանի
վերազինման

Պատվիրատու՝

<< Լեքս տորակո քոմփանի >> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.2 Հապավումներ.....3

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը4

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)8

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....8

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՍՊԳ).....11

1.5 Կազմակերպության բնութագիրը որպես մթնոլորտն աղտոտող աղբյուր16

1.6 Ջրամատակարարում և ջրահեռացում.....16

1.7 Ընդհանուր տեղեկություններ գոյացող թափոնների վերաբերյալ18

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....23

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....23

2.2 ԿԼԻՄԱՆ.....30

2.3 Օդային ավազան33

2.4 Ջրային ռեսուրսներ36

2.5 Հողերի նկարագիրը37

2.6 Կենսաբազմազանություն38

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....40

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....41

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....43

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ44

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 **Ձեռնարկողի մասին տեղեկություն**

- 1.2 Ձեռնարկող՝ <<Լեքս տոբակո քոմփանի>> ՍՊԸ

- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Ք.Երևան, Կուրդինյան նրբ. 132, բն.32
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Ք.Երևան, Կուրդինյան նրբ. 132, բն.32
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

1.2 **Հապավումներ**

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ԼԵՔՍ ՏՈՒՄԿՈ» ՍՊԸ ընկերությունը զբաղվում է ծխախոտի արտադրությամբ: Ընկերությունը գործունեությունը իրականացնում է Արշակունյանց պողոտա 127/21 հասցեում: Պայմանավորված ընկերության արտադրանքի նկատմամբ սպառողների պահանջարկի աճով, ընկերությունը որոշել է ընդլայնել գործունեությունը:

Գործունեության նպատակն է մեծացնել գործող ծխախոտի գործարանի արտադրողականությունը:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»
12. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասագերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին» N16 արձանագրային որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

19. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

20. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

21. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

22. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

23. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

24. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

25. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

26. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

«ԼԵՔՍ ՏՈՒՄԱԿՈ» ՍՊԸ ընկերությունը զբաղվում է ծխախոտի արտադրությամբ: Ընկերությունը գործունեությունը իրականացնում է Արշակունյանց պողոտա 127/21 հասցեում: Մինչև 2019թ դեկտեմբեր շինությունը ծառայել է որպես ՀՀ ՊԵԿ Արարատյան բաժանմունքի մասնաճյուղ: Պայմանավորված ընկերության արտադրանքի նկատմամբ սպառողների պահանջարկի աճով, ընկերությունը որոշել է ընդլայնել գործունեությունը:

Շինությունը բաղկացած է երկու մասնաշենքերից արտադրական և գրասենյակային: Շենքում նախատեսված են աշխատողների համար հանդերձանքի, հանգստի, սննդի, կազմակերպման սենյակներ: Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսված են օֆիսային սենյակներ: Շինության ձախակողմյան հատվածում նախատեսված են կցակառույցներ, որտեղ գտնվում են էլ. Ենթակայանը, կաթսայատունը, կոմպրեսորային սենյակները: Վերազինման համար նոր շինությունների ավելացում չի նախատեսվում:

Արտադրողականությունը մեծացնելու նպատակով նախատեսվում է գոյություն ունեցող 2 հոսքազծերին նույն արտադրամասում ավելացնել ծխախոտի արտադրության PROTOS 80E և 4 FOCKE 4 հատ հոսքազծեր, գումարային հզորությունը հասցնելով 43200000 գլանակ/օր կամ 25.06 տ/օր: Գործարանի աշխատանքային ռեժիմը 24 ժամ, 3 հերթափոխ, տարեկան 312 օր:

Կոմպրեսորային կայանում տեղադրված է Atlas Copco ֆիրմայի ZT37 տիպի, աշխատանքային ճնշումը՝ 0.86 ՄՊա, արտադրողականությունը՝ 5.8խմ/ր կոմպրեսոր:

Կաթսայատանը տեղադրված է 2 ջրատաքացուցիչ կաթսաներ Ariston մակնիշի Ecomax NC 630-N 688 կվտ, Wolf մակնիշի 450 կվտ հզորությամբ:

Ծխախոտի արտադրության գործընթացի հակիրճ նկարագիրը՝ Թությունը շարվում է դարակների վրա, տեղափոխվում է պահեստ, որտեղ մնում է մինչև 3 օր ադապտացվելու համար: 3 օրվա ընդացքում կատարվում է լաբարատոր գնում(խոնավություն, որակը, չափսը(կտրվածք) և այլն):

Պահեստից հետո ըստ պահանջի և սիգարետի տեսակից, դուրս է բերվում թությունը դեպի արտադրամաս, որտեղ տեղի է ունենում ռեալիզացում (թությունը ներս է քաշվում դեպի հաստոց): PROTOS 80E հաստոցի միջոցով, այնտեղ իրականացվում է թությունի մաղում, առանձնացնելով խոշորահատիկը ընդհանուրից:

Սիգարետի թուղթը բաբինով տեղադրվում է հաստոցի վրա ջերմային հաստուկ տեխնոլոգիային միջոցով թուղթը դառնում է գլանակ, որի մեջ լցվում է թությունը որից

հետո ամրացվում է ծխախոտի ֆիլտր, որից հետո ամրացվում է ֆիլտրի վրայի թուղթը:

Սիգարետի տուփը FOCKE հաստոցի մեջ առանձնացվում է 20 հատիկ սիգարետը, որից հետո տեղադրվում է ֆոլգայի մեջ, որից հետո տեղադրվում ներդիրը կլեյով ամրացվում է սիգարետի տուփին: Ծխախոտը FOCKE հաստոցում ցելաֆոնապատվում է այնուհետև ջերմային հարթակի միջոցով սիգարետի տուփը ստանում է ապրանքային տեսք այնուհետև պատրաստի սիգարետը 10 հատով առանձնացվում է և տեղադրվում է բլոկի մեջ:

Կից նախատեսվող 6 հարկանի պահեստայի շինությունում կպահվեն արտադրության համար անհարաժեշտ կիսաֆաբիկատները և նյութերը:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝

Հողի ընդհանուր մակերես՝ 6.369366 հա;

Նշված հողամասում առկա են N01082022-01-0223 վկայականով ամրագրված շենք-շինությունները, որի մի հատվածքում գործում է ծխախոտի արտադրությունը:

Ծխախոտի գործարանի տարածք -7224.814 քմ;

Արտադրական շինության մակերես – 4168.0 քմ;

Գրասենյակային շինության մակերես - 2049.0 քմ;

Ասֆալտապատ տարածք-907.814 քմ;

Կանաչապատ տարածք -100 քմ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության,

ընդերքօգագործման և այլ արտադրական նշանակության

- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերության

օբյեկտների:

- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ընկերությունը ունի ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման գործող պայմանագրեր Վեռլիա ջուր, Հայաստանի էլեկտրական ցանցեր, << Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ հետ:

Նախագծվող տարածքի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախագծով նախատեսված է օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Արտադրամասերում և ադմինիստրատիվ սենյակներում նախատեսվել է օդի ներածման ու արտածման էներգիայի վերաօգտագործմամբ համակարգ, իսկ

ավտոկայանատեղիներում և մնացած այլ օժանդակ սենյակներում օդի ներածման և արտածման իրարից անջատ համակարգեր.

Համակարգերի ընտրությունը կատարվել է տեխնիկատնտեսական վերլուծության արդյունքում նաև հաշվի առնելով շենքի տեխնիկական հնարավորությունները ու այս ամենը համաձայնեցնելով պատվիրատույի հետ, բաժանվել է ըստ հարկերի՝ ամեն հարկում նախատեսելով այդ հարկը սպասարկող, մաքուր օդի մշակման՝ ներածման-արտածման ռեկուպեռացիոն սարք(եր), կամ ուղակի ներածման և արտածման անջատ սարք(եր):

Սանհանգույցներում համեմատաբար ախտոտված օդը հեռանում է իրենց համար նախատեսված անջատ արտածման համակարգով, որը իրականացվում է ուղղաձիգ օդատարի կանգնակով և այդ համակարգում նախատեսվող մեկ ընդհանուր ատածման օդամղիչով:

Ադմինիստրատիվ և արտադրական հատվածներում նախատեսվել է օդի ներածման և արտածման համակցված համակարգ, որի հաշվարկում հիմք է ընդունվել 1 մարդուն հասանելիք թարմ օդի նորմատիվային պահանջը:

Ադմուկի իլեցման համար ադմինիստրատիվ հատվածներում նախատեսված են.

- Օդամղիչների հետ համակարգի միացումը կատարել ճկուն ներդիրների միջոցով:
- Օդի արագությունը օդատարներում չի գերազանցում 5մ/վրկ:

Հակահրդեհային համակարգերի գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

Ընկերությունում աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով նախատեսված է սանհանգույցներ, լվացարաններ, հանգստի սենյակներ:

Նախագծվող տարածքի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախագծով նախատեսված է օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Շենքի էներգոարդյունավետությունը ապահովվելու նպատակով շենքի պատերը և տանիքը նախատեսված է արդյունավետ ջերմամեկուսիչ նյութերի կիրառմամբ սահմանված նորմերը ապահովելու նպատակով:

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՄՊԳ)

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, թուրքունի վերամշակման արտադրամասերի համար սահմանված է 50մ /V դաս/, ինչը լիովին ապահովված է:


Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը


Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացված են գրունտների հետևյալ տարատեսակները՝


- Շերտ-1 Լիցքեր՝ կազմված խճից, խճավազից և մինչև 25-30% կավավազների և ավազների խառնուրդից: Գրունտը թույլ խոնավ է և համատարած, իսկ հորատանցք 3-ի հատվածում 0,9 մետրից՝ ջրհագեցած: Շերտի հորատված հզորությունը 1,0-ից-2,7 մետր է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի III կարգ է:
- Շերտ-2 Ավազակավեր շագանակագույն և մուգ շագանակագույն, խոնավ, ձիգ պլաստիկ կոնսիստենցիայի, կոպիճի մինչև 5-10% պարունակությամբ, միջին խտության: Շերտը համատարած է: Շերտի հորատված հզորությունը 1,2-ից 6,4 մետր է: Ժամանակակից դեյուվիալ նստվածքներ են:
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի III կարգ է:
- Շերտ-3 Կավավազներ ավազային և փոշային, շագանակագույն և մոխրագույն, պլաստիկ կոնսիստենցիայի, սակավ խոնավ, իսկ 10,4-12,0 մետրից՝ ջրհագեցած, խիտ, ավազների 20-40սմ հզորությամբ ենթաշերտերով, տեղ-տեղ շերտի ստորին հատվածում ճալաքարի ու կոպիճի պարունակությամբ: Շերտը համատարած է, իսկ հորատված հզորությունը 5,6-ից 9,3 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի վերին պլեյստոցեն դարակարգի լճաայուվիալ նստվածքներ են:
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի II կարգ է:
- Շերտ-4 Կավեր փոշային, շագանակագույն, պինդ և կիսապինդ կոնսիստենցիայի, սակավ խոնավ, խիտ: Շերտը համատարած է: Շերտի հորատված առավելագույն հզորությունը 11,5 մետր է: Պալեոգեն-նեոգեն ժամանակաշրջանի վերին օլիգոգեն-միոգեն դարակարգի լճաայուվիալ նստվածքներ են:
Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի IV կարգ է:

Սեյսմիկ պայմանները

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, գետնի սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են 0,4g և ունի 9 և բարձր բալականություն: Հաշվի առնելով նաև, որ հետազոտվող տարածքը գտնվում է Երևանյան տեկտոնական ակտիվ խզման գոտուց 10 կմ-ից փոքր հեռավորության վրա (մոտ 3,0 կմ) ապա անհրաժեշտ է դեկլարավել նորմատիվի 5.2.2 կետով՝ սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունը բազմապատկել 1,2 գործակցով: Այսպիսով սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները ընդունել 0,48g:







1.5 Կազմակերպության բնութագիրը որպես մթնոլորտն աղտոտող աղբյուր

Ընկերության գործունեությունից մթնոլորտ արտանետումներ առաջանում են՝
 - կաթսայատանից՝ որտեղ տեղադրված են
 Կաթսայատանը տեղադրված է 2 ջրատաքացուցիչ կաթսաներ Ariston մակնիշի Ecomax NC 630-N 688 կվտ, Wolf մակնիշի 450 կվտ հզորությամբ:

Գործունեության բնութագիրը՝

Ծխախոտի արտադրամասում արտանետումները բացակայում են, քանի որ մշակված թուփունը, որը ունի որոշակի խոնավություն տրվում է ծխախոտի պատրաստման հոսքագիծ: Ըստ ծխախոտի արտադրության տեխնոլոգիայի արտադրամասում տեղադրված են սարքավորումներ, որոնք ապահովում են խոնավության ցուցանիշները արտադրական տարածքներում:

- կաթսայատանը տեղադրված են 2 հատ ջրատաքացուցիչ կաթսաներ: Հիմնական վառելիքը բնական գազն է: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերն են՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները:

Կաթսաները ապահովված են այրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունը ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով:

Կաթսայատանից առաջացող արտանետումների հաշվարկները կներկայացվեն գիտահատման հաշվետվության փուլում:

1.6 Ջրամատակարարում և ջրահեռացում

Արտադրամասի ջրամատակարարումը իրականացվում է Էրեբունու փողոցով անցնող գործող Ø400 ջրագծից, տեղադրված է ջրի դիտահոր ՋԴՀ-1: Դիտահորի մեջ նախատեսված են ջրաչափական հանգույց և սողնակներ:

Ջրագծի արտաքին ցանցի մոնտաժը կատարվում է եռակցովի պողպատե խողովակներով Ø89x3.0 տրամագծով: Խողովակները տեղադրվում են փափուկ բնահողից կառուցված հիմնատակի վրա: Հողի միջով անցնող արտաքին ջրագծի խողովակները նախատեսված է հակակոռոզիոն ներկել բիտումային մածուկով:

Ձեռնարկությունում ջուրն օգտագործվում է տեխնոլոգիական, կոմունալ-կենցաղային և սանիտարական կարիքների համար:

Կենցաղային կեղտոտաջրերը սանսարքերից (կոյուղու ելք Կ-1/ ինքնահոս հավաքվում և հեռացվում են կոյուղու դիտահոր ԿԴՀ-1, այնտեղ էլ Էրեբունու փողոցով անցնող արտաքին կոյուղու ցանց, տեղադրելով միացման կետում ԿԴՀ – 3 դիտահորը / Փ 1000/: Կ – 2 կոյուղու ելքը /թիվ սանհանգույցներից/ պոմպի միջոցով հեռացվում ԿԴՀ – 2 նախագծվող դիտահոր, այնտեղից էլ ԿԴՀ-1 դիտահոր, այնուհետև արտաքին կոյուղու ցանց : Կոյուղու ներքին ցանցը իրականացված է կոյուղու պոլիէթիլեն խողովակներից Փ50, Փ100, Փ150 տրամագծերով TY 21-26-100-80, կոյուղու արտաքին ցանցը՝ Փ 150 տրամագծի

պոլիէթիլենե բարձր խտության խողովակներից: Խողովակները տեղադրվում են փափուկ բնահողից կառուցված հիմնատակի վրա: Կոյուղու և ջրամատակարարման ցանցերը նախագծված են հաշվի առնելով նորմերով սահմանված թեքությունները:

Ընկերության ջրապահանջի և ջրահեռացման հաշվարկները կներկայացվեն գնահատման հաշվետվության փուլում:

1.7 Ընդհանուր տեղեկություններ գոյացող թափոնների վերաբերյալ

1. «Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 9211010013012:

Վտանգավորության դասը՝ 2

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – պլաստմասսե իրան՝ 15 %, կապարե թիթեղներ՝ 65-70 %, էլեկտրոլիտ /ծծմբական թթվի լուծույթ/՝ 15-20%:

Բնութագիրը՝ էլեկտրոլիտը կոռոզիոն ակտիվ է, հրդեհապայթյունավտանգ չէ, թունավոր է շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար, ծծմբական թթուն առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթի գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելիս դժվարանում է շնչառությունը, առաջանում է հագ, երբեմն լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ:

Կապարը կուտակվում է օրգանիզմում՝ առաջացնելով քրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա: Պլաստմասսան ֆիզիոլոգիական տեսանկյունից համարյա անվնաս է : Սրանց քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ, որոնք ընկնելով մարդու օրգանիզմ աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը: Բույսերի վրա ֆտալատների ազդեցության ժամանակ կարող են առաջանալ քլորոզներ:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և էլեկտրական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները շահագործման համար պիտանելիությունը կորցնելու դեպքում փոխարինվում են նորերով: Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում կարող է առաջացել են 0,2 տոննա բանեցված կապարե կուտակիչների թափոններ:

Ընկերությունում արդեն ոչ պիտանի կապարային մարտկոցները փոխարինվում են ավտոտեխսպասարկման կայաններում:

2. «Իրենց սպառողական հատկությունները կորցրած կոմպրեսորային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410031102033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Բաղադրությունը –կոմպրեսորային յուղ՝ 96,7 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,5%, ջուր՝ 1,8%:

Բնութագիրը՝ դյուրավառ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են կոմպրեսորային համակարգերի շահագործման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները՝ յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով:

Ընկերությունում կգոյանա 0,3 տոննա կոմպրեսորային յուղերի մնացորդներ, որն կօգտագործվեն սեփական կարիքների համար, մասնավորապես արտադրական հոսքագծերի և մեխանիզմների յուղման համար:

3. «Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410030202033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Բաղադրությունը – յուղ՝ 95,7 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,2%, ջուր՝ 2%, սուլֆատային մոխիր՝ 1,1%:

Բնութագիրը՝ դյուրավառ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոմեքենաների շարժիչների յուղման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները՝ յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով: Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Ընդհանուր առմամբ շարժիչային յուղերը, հանդիսանալով նավթավերամշակման արդյունք և հիմնականում կազմված լինելով տարբեր բարձրա- և ցածրամոլեկուլային ածխաջրածինների խառնուրդից, վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար: Ընկնելով շրջակա միջավայր բանեցված շարժիչային յուղերի մի փոքր մասն է ենթարկվում քայքայման և հեռացվում բնական պրոցեսների արդյունքում: Իսկ դրանց հիմնական մասը հանդիսանում է հողի, ստորերկրա և մակերևութային ջրերի ու մթնոլորտի աղտոտիչ: Բանեցված շարժիչային յուղով հողի աղտոտման ժամանակ հողային օրգանիզմների համար ստեղծվում է նոր էկոլոգիական պայմաններ: Այս հողերում տեղի է ունենում պեդոբիոտների տեսակային էկոլոգիական բազմազանության կրճատում ավտոտրոֆ ասիմիլյացիայի վատացում , հողային կենդանիների ֆունկցիոնալ ակտիվության ու հողի ֆերմենտային ակտիվության անկում: Դեպի հողի մակերես նավթամթերքի հոսքից հետո առաջին հերթին այն ներծծվում է հող և խախտում է հողի ջրաօդային հավասարակշռությունը: Դրա արդյունքում առաջանում է հողի դեֆլյացիյա, հարթ և գծային էրոզիա: Դա էլ իր հերթին բերում է հողի աղքատացմանը և կենսաարտադրողականության անկմանը:

Թափոններն անհրաժեշտ է առանձնացնել և տեղադրել հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրը պետք է ունենա թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում կառաջանա 0,4 տոննա ավտոմոբիլային յուղերի թափոններ, որոնք կփոխարինվեն մասնագիտացված ավտոտեխսպասարկման կայաններում:

4. «Յուղոտված լաթեր» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5820060001014:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Քիմիական բաղադրությունը – լաթեր՝ 75-85%, յուղ՝ 10-15%, ջուր՝ 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, ինքնաբռնկվող, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Տարեկան ակնկալվող «Յուղոտված լաթեր» թափոնի քանակը 0,3 տոննա:

5. «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 9120040001004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – թուղթ և սովարաթուղթ՝ 35-40% , պոլիէթիլեն՝ 30-35%, ապակի՝ 5-6%, ռետինե ձեռնոցներ՝ 3-4%, մետաղական տարաներ՝ 15-20%, այլ՝ 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, առաջացնում է տարածքի աղտոտում, էկոթունավոր է:

Թափոնները գոյանում են կազմակերպության աշխատակիցների կենսագործունեության, տարածքների մաքրման աշխատանքների արդյունքում: Կազմակերպության տարածքում տեղադրված են աղբամաններ, որոնցում կուտակվում է կենցաղային աղբը մինչև աղբավայր տեղափոխելը :

Նախորդ տարում առաջացել են «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի/» թափոն 0,4 տոննա, որը տեղափոխվել է աղբավայր (պայմանագրային հիմունքներով):

6. «Բանեցված օդաճնշիչ դողեր» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5750020013004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – բուտադիենային կաուչուկ՝ 98%, պողպատ՝ 2%:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, սակայն կրակի առկայությամբ կարող է այրվել, թունավոր շրջակա միջավայրի համար:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Դողերը պարբերաբար փոխարինվում են նորերով: Ընդհանուր առմամբ բանեցված դողերը շրջակա միջավայրում քայքայվում են մոտ 100 տարում: Դողերի շփումը անձրևաջրերի և գրունտային ջրերի հետ առաջացնում է որոշ տոքսիկ օրգանական նյութերի /դիբութիլ ֆտալատ, ֆենատրապեն և այլն/ լվացում, որոնք ընկնելով շրջակա միջավայր բացասական ազդեցություն են թողնում հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացել են 0,5 տոննա բանեցված օդաճնշիչ դողերի թափոններ, որոնք փոխարինվել են ավտոտեխսպասարկման կայաններում:

7. «Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410030702033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Քիմիական բաղադրությունը – յուղ՝ 96,5 %, մեխանիկական խառնուրդներ՝ 3,5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են տրանսֆորմատորային կայանքների շահագործման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո, կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները, փոխարինվում են նոր քանակներով:

Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պահված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրն ունի թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով: Այնուհետև յուղերն օգտագործվելու են ձեռնարկության կարիքների համար կամ վաճառվելու են յուղերի վերականգնմամբ զբաղվող կազմակերպություններին:

Նախորդ տարում իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ չեն առաջացել: Առաջանալու դեպքում կօգտագործվեն սեփական կարիքների համար:

8. «Հալոգեններ չպարունակող և իրենց սպառողական հատկությունները կորցրած հիդրավլիկ յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410031302033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Քիմիական բաղադրությունը – հիդրավլիկ յուղ՝ 98,5 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են հիդրավլիկ սարքավորումների սպասարկման, վերանորոգման, շահագործման և յուղի փոխման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո, կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները, փոխարինվում են նոր քանակներով:

Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պահված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրն ունի

թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով:

Նախորդ տարում առաջացել են 0,15 տոննա հիդրավլիկ յուղերի մնացորդներ թափոններ, որոնք օգտագործվել են սեփական կարիքների համար, մասնավորապես սարքավորումների և մեխանիզմների յուղման համար:

9. «Թուրունի փոշի» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 1140410211013

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը՝ նիկոտին՝ 1.4%, շաքար՝ 3.8%, քլոր՝ 0.5%, ջուր՝ 17%, կարբոնատներ՝ 25%, նիտրատներ՝ 1%, ֆոսֆատներ՝ 1%, սպիտակուցներ՝ 13%, հանքանյութեր՝ 16%, եթերային յուղեր՝ 1%, խեժանյութեր՝ 7%, պոլիֆենոլներ՝ 3.3%, ածխաջրեր՝ 10%

Թափոնն առաջանում է ծխախոտի արտադրման արդյունքում:

Թափոնն անհրաժեշտ է պահել փակ տարողություններում, հատուկ առանձնացված զով և չոր տարածքում: Անհրաժեշտ է բացառել խոնավության թափանցումը, զերծ պահել կրակի առկայությունից:

Նախորդ տարի առաջացել է «Թուրունի փոշի» թափոն 0.5 տոննա, որը տեղափոխվել է աղբավայր համաձայն պայմանագրի:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծվող Լեքս տոբակո քումփանի ընկերության ծխախոտի գործարանը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա 127/21 հասցեում՝ և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.091.700 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը ներկայացնում է Արարատյան ակունույատիվ գոգավորության հյուսիս-արևմտյան վերջավորության մի հատված, որտեղ ռելիեֆը հարթ է, իսկ բացարձակ նիշերը տատանվում են 915,5 – 916,0 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը հարուստ է ստորերկրյա ջրերով, որոնք մի քանի հորիզոններով այստեղ փաստագրվել են 70-80 մետրից ավել խորություններում (ըստ նախկինում հորատված հորատանցքերի):

Բուն հետազոտվող տեղամասում մինչև 20 մետր խորությամբ փորված 3 հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Հետևաբար գրունտային ջրերը տեղամասում գտնվում են 20 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Շենգավիթ վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	հավելյալ նշումներ
Բարձրաքանդակներ «Սասունցի Դավիթ»	քանդ․ Ա. Հովսեփյան, Մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի շենքում
Բնակատեղի Շենգավիթ	
Գաղտնուղի	
Մենհիր	բնակատեղի թանգարանի մուտքի մոտ
Բնակելի տուն	ճարտ․ Ս. Մանուկյան, Չ. Տոնիկյան
Բնակելի տուն	
Բնակելի տների համալիր. Սինթետիկ կաուչուկի գործարանի բնակելի շենքերը	ճարտ․ Գ. Քոչար, Ս. Մազմանյան, Հ. Մարգարյան, Ս. Սաֆարյան, Ա. Ահարոնյան
Գերեզման Շուշանիկ Կուրդինյանի	քանդ․ Ս. Բաղդասարյան, ճարտ․ Ջ. Թորոսյան
Գերեզմանոց	
Խաչքար	մատուռից 5 մ հվ, պահպանված են միայն վերին ու ստորին բեկորները
Խաչքար	գերեզմանոցի հվ- ամ մասում
Խաչքար	մատուռի հվ կողմում
Խաչքար Հովհաննես քահանայի	գերեզմանոցի հվ-ամ մասում պահպանված է միայն խորանարդաձև արձանագիր պատվանդանը
Խաչքար	մատուռի մոտ, Ամիրի խաչքարի մոտ
Խաչքար Ամիրի	մատուռի մոտ
Խաչքար	հենած մատուռի փլատակներին
Կոթող	մատուռի հվ կողմում պահպանված է միայն պատվանդանը
Մատուռ Հոգեհանգստյան	գերեզմանոցում
Խաչքար	դրված՝ գլխիվայր, մատուռում, պահպանված է ստորին մասը
Գերեզմանոց	թիվ 86 բնակելի տան հարևանությամբ
Դամբարան	1984-ին նախագծվել և իրականացվել է պահպանական կառույց, նախագիծը ճարտ․ Վ. Ճաղարյանի
Եկեղեցական համալիր Նորագավթի Սբ. Գևորգ(Ծիրանավոր Սբ. Գևորգ)	

հուշարձան	հավելյալ նշումներ
Եկեղեցի Սբ. Գևորգ (Օիրանավոր)	վրկո՝ 1982 թ.
Խաչքար Ավետիսի	ագուցված աե պատին
Խաչքար Հովհաննեսի, Վարդանի և Կարապետի	ագուցված աա պատին
Խաչքար Սարգսի	ագուցված աա պատին
Խաչքար Հակոբի և Ասատուրի	եկդ-ցու աե պատին, քիվի տակ
Խաչքար Վարդանի	ագուցված աե պատին
Որմնանկար «Անհայտ զինվոր»	հվ-աե սյան հս երեսին
Որմնանկար «Ավետում»	հվ-աա սյան հս երեսին
Որմնանկար «Թեոդորոսը»	հվ-աա սյան աե երեսին
Որմնանկար «Հրեշտակ»	հվ-աե սյան աա երեսին
Որմնանկար «Սբ. Մինասը ձիու վրա»	հս-աե սյան հվ երեսին
Որմնանկար «Սարկավագ»	հվ-աե սյան հվ երեսին
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	
Խաչքար	եկդ-ցու հվ-աա անկյան մոտ, պահպանված է ստորին մասը
Խաչքար	մուտքի մոտ, արձանագիր, պահպանված է վերին մասը
Եկեղեցի Սբ. Կիրակի	վրկնգ՝ 1981-1985 թթ.
Դպրոցի շենք. Ծխական դպրոցը	
Գերեզմանոց	համալիրի շուրջը
Խաչքար	եկդ-ցու աե պատի տակ
Խաչքար	եկդ-ցու աե պատի տակ
Խաչքար	եկդ-ցու աե պատի տակ
Խաչքար	եկդ-ցու աե պատի տակ
Խաչքար Գեղեցիկի	եկդ-ցու աե պատի տակ, պահպանված է վերին կեսը
Խաչքար Էմանուել եպիսկոպոսի	եկդ-ցու աե պատի տակ
Խաչքար Տեր Հովհաննեսի	եկդ-ցու աե պատի տակ, պահպանված է վերնամասը
Հուշարձան Հունան Ավետիսյանի	թիվ 74 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Թերեզա Միրզոյան, ճարտարապետ՝ Էդուարդ Սարապյան
Հուշարձան Վիսարիոն Բելինսկու	թիվ 38 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Արա Հարությունյան, ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան

հուշարձան	հավելյալ նշումներ
Հուշարձան Դերենիկ Դեմիրճյանի	թիվ 27 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Վ. Պետրոսյան, ճարտ.՝ <u>Լևոն Ղալումյան</u>
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված օդաչուներին	քանդակագործ՝ Մ. Ջաղացպանյան, ճարտ.՝ Օ. Բերբերյան
Հուշարձան Լեոյի	թիվ 65 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Հ. Մուրադյան, ճարտ.՝ Շ. Ազատյան
Հուշարձան Ալեքսանդր Սյասնիկյանի	թիվ 66 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ <u>Գրիգոր Ահարոնյան</u> , ճարտ.՝ <u>Էդուարդ Սարապյան</u>
Հուշարձան Մուրացանի	թիվ 18 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ <u>Արա Հարությունյան</u> , ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան
Հուշարձան Հովհաննես Շիրազի	թիվ 169 համանուն դպրոցի առջև
Որմնանկարներ	Մեքենաշինական տեխնիկումի շենքում, նկ՝ Մ. Ավետիսյան
Պանթեոն Կոմիտասի անվան զբոսայգու	
Հուշապատ	քանդ.՝ <u>Ռուզան Քյուրքյան</u> , ճարտ.՝ <u>Ստեփան Քյուրքյան</u>
Գերեզման Հովհաննես Աբելյանի	
Գերեզման Վրթանես Ախիկյանի	
Գերեզման Վարդան Աճեմյանի	քանդ.՝ Ֆ. Առաքելյան, ճարտ.՝ Ա. Թարխանյան
Գերեզման Գրիգոր Արզումանյանի	ճարտ.՝ Կ. Անանյան
Գերեզման Վահագն Դավթյանի	
Գերեզման Կարեն Դեմիրճյանի	
Գերեզման Ստեփան Դեմուրյանի	
Գերեզման Ստեփան Զորյանի	քանդ.՝ Ղ. Զուբարյան, ճարտ.՝ Լ. Զորյան, Կ. Զորյան
Գերեզման Եղիշե Թադևոսյանի	ճարտ.՝ Կ. Դրամփյան, քանդ.՝ Ա. Հարությունյան
Գերեզման Ալեքսանդր Թամանյանի	
Գերեզման Թորոս Թորամանյանի	
Գերեզման Ավետիք Իսահակյանի	քանդ.՝ Ս. Բաղդասարյան, ճարտ.՝ Է. Սարապյան
Գերեզման Երվանդ Լալայանի	
Գերեզման Լեոյի	ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Գերեզման Սահակ Լիսիցյանի	
Գերեզման Ցոլակ Խանզադյանի	
Գերեզման Արամ Խաչատրյանի	ճարտ.՝ Ս. Քյուրքյան

հուշարձան	հավելյալ նշումներ
Գերեզման Խնկո-Ապոր	
Գերեզման Կոմիտասի	քանդ.՝ Ս. Հարությունյան, ճարտ.՝ Գ. Աղաբաբյան
Գերեզման Հովհաննես Հովհաննիսյանի	
Գերեզման Հրաչյա Ղափլանյանի	
Գերեզման Վասիլի Ղորղանյանի	
Գերեզման Ստեփան Մանուկյանի	
Գերեզման Ռոմանոս Մելիքյանի	
Գերեզման Սպիրիդոն Մելիքյանի	
Գերեզման Մհեր Սկրոչյանի	
Գերեզման Տիգրան Մուշեղյանի	
Գերեզման Հրաչյա Ներսիսյանի	ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Գերեզման Հովհաննես Շիրազի	քանդ.՝ Ա. Շիրազ
Գերեզման Ալեքսանդր Շիրվանզադեի	քանդ.՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Համո Սահյանի	
Գերեզման Մարտիրոս Սարյանի	ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Վիլյամ Սարոյանի	քանդ.՝ Ա. Շիրազ, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Վահան Տերյանի	1920 թ. Օրենբուրգ, ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Գերեզման Վահրամ Փափազյանի	քանդ.՝ Ռ. Քյուրքչյան, ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Գերեզման Վրթանես Փափազյանի	
Ցուցահանդեսային համալիր. «Ժողովրդական տնտեսության նվաճումներ» («Արմէքսպո»)	
Տաղավար Կրթության և մշակույթի	ճարտ.՝ Ֆնիքս Դարբինյան, Ռ. Մելքումյան
Տաղավար Հյուրերի	ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան, Ռ. Մելքումյան, նախկինում՝ Գիտության տաղավար
Տաղավար Մեքենաշինության	ճարտ.՝ Լ. Գևորգյան, Ջիմ Թորոսյան, կոնստ՝ Ռ. Մանուկյան, նախկինում՝ Արդյունաբերության տաղավար
Փողոցի կառուցապատման հատվածներ. Նորագավթի 1-ին փողոցը	
Բնակելի տուն	
Բնակելի տուն	
Բնակելի տուն	

հուշարձան	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	
Բնակելի տուն	
Քաղաքատեղի Թեյշեբաինի (Կարմիր բլուր)	քաղաքի հվ-ամ կողմում, Հրազդանի ձախ ափին
Բնակելի թաղամաս	միջնաբերդից հվ
Բնակելի տուն	հարուստ ուրարտացու տուն
Բնակելի տուն	սեկցիոն
Բնակելի տուն	մեզարոնատիպ
Միջնաբերդ	
Քանդակ «Կաշեգործ»	Կաշվի գործարանի բակում, քանդ.՝ Ս. Բաղդասարյան
Քարայր-կացարան «Երևան-1»	
Քարայր-կացարան «Երևան-2»	«Երևան-1»-ից 300 մ գետի հոսանքով դեպի վեր
Քարայր-կացարան «Երևան-3»	«Երևան-2»-ից 200 մ գետի հոսանքով դեպի վեր
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-1»	
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-2»	նախորդից 100 մ խճուղով դեպի վեր
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-3»	նախորդից 600 մ հեռու դեպի խճուղին, հայտնաբերված 1967 թ.
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-4»	նախորդից 10 մ հեռու դեպի խճուղին, խճուղու վերջում, հայտնաբերված 1967 թ.
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-5»	նախորդից 80 մ հեռու, հայտնաբերված 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-1»	կամրջի ամ կողմից 50 մ հվ, հայտնաբերված՝ 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-2»	կամրջից հս, հայտնաբերված՝ 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-3»	կամրջից հս, Շենգավիթ-2 քարայրից 30 մ հս, հայտնաբերված՝ 1968 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-4»	կամրջից հս, Շենգավիթ-2՝ քարայրի հարևանությամբ

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ կամ բուսատեսակներ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆազիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում Շինարարական Կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011 համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Էրեբունի" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	888	-3.6	-1.0	5,3	12.5	17.4	21.8	25,8	25.2	20.5	13,3	6.3	-0.2	11,9	-28	42

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան " Էրեբունի " օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան " Էրեբունի " օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Չնաձածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291			
Երևան	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51	58	47	

Բնակավայրի, օրերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ասիաներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կոնկենտրացիոն %	Միջին ամսական ատառություն, մ/վ	Միջին տարեկան ատառություն, մ/վ	Միջին քամիներով (Մ15)/մվ օտեռն քանակ	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "Ե" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1.0							
	2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5									


2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:


2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2021 թվականին հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Երևան քաղաքում, Արմավիրի և Շիրակի մարզերում: Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՄԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:



2.6 Կենսաբազմազանություն

Քուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ էլ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflora*, *Ziziphora persica*, *Alyssium desertorium*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեղճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարաձեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին եւ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիդներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տենսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*) Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթել չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթել սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաբույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ չեն հայտնաբերվել:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Արտադրատարածքում շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:

- Երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

- Տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների:

- Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) ընկերության արտադրական աշխատանքը կանգնեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:

- Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:

- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների վերահսկումը,

- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ջերմային գործընթացները,

- III կարգի վտանգի ժամանակ կարճաժամկետ դադարեցվում է շոգեկաթսաների աշխատանքը առանց ջերմային ցանցերի դատարկման:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես արտադրամասի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից:

- Չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:

- Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

Տեղեկություններ թափոնների գործածության ոլորտում նախատեսվող միջոցառումների վերաբերյալ

Ձեռնարկությունում գոյացող վտանգավոր թափոնների անձնագրերը սահմանված կարգով կներկայացվեն ՇՄ նախարարություն համաձայնեցման:

Թափոնների անձնագրերը պարունակում են տեղեկություններ թափոնի քանակության, վտանգավոր հատկությունների, ծագման, կազմի, հրդեհապայթյունավտանգության, կոռոզիոն հատկությունների, ռեակցիոնունակության, վնասագերծման ու վերամշակման առաջարկվող եղանակների, տեղափոխման ընթացքում սահմանափակումների, գործածության ժամանակ ձեռնարկվելիք անհրաժեշտ նախազուշակյան միջոցառումների մասին:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նպատակով ընկերությունում օրենսդրությամբ սահմանված կարգով կիրականացվի թափոնների հաշվառում:

Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգաւերել տեխնիկական միջոցների, բացառել անսարք վիճակում գտնվող սարքավորումների օգտագործումը
- տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Գործարանի աշխատանքի ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 550 հազ. դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ